ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

# ՀՐԱՄԱՆ

**N 423-Ա/2** **10.04.2020թ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 6-Ի N 309-Ա/2 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կանոնադրության 19-րդ կետի 20-րդ ենթակետով՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության 2020 թվականի մարտի 6-ի «Արտավազդ թատերական մրցանակաբաշխության իրականացման ծրագիրը հաստատելու և գումար հատկացնելու մասին» N 309-Ա/2 հրամանում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 2-րդ կետում «2030.0 հազար (երկու միլիոն երեսուն հազար) դրամ» թվերը և բառերը փոխարինել «80.0 հազար (ութսուն հազար) դրամ» թվերով և բառերով:

2) 3-րդ կետում «կնքել պայմանագրեր (այսուհետ՝ պայմանագրեր)՝ «Պետական կամերային երաժշտական թատրոն», «Հ.Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոն», «Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոն», «Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունների հետ:» բառերը փոխարինել «կնքել պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր)՝ «Պետական կամերային երաժշտական թատրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության հետ:» բառերով:

3) Հրամանի անբաժանելի մաս կազմող հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

ՆԱԽԱՐԱՐ ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

X